Հավելված
ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020թ. փետրվարի 28-ի թիվ 195-Ա հրամանի

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒՑ ԱՆՄԻՋԱՊԵՍ ՀԵՏՈ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N61917/2021/ԿՈՒՎ4/Ա

Ք. Երևան

20.12.2021
Կազմման ամսաթիվ

1. ՀԱՍՄԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ ՀԵՆՐԻԿԻ — ՀՎՀՀ 40076483
(հարկային իրավախախտումը կատարած անձի անունը, ազգանունը)

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՍԱՐՅԱՆ Փ., 24Շ, 16ԲՆ
(բնակության (գտնվելու վայրի) հասցեն

2. 7708650054
(ֆիզիկական անձի անձնագրային տվյալները և/կամ/
հանրային ծառայությունների համարանիշը)

3. **Հարկային իրավախախտումների նկարագրությունը, ժամանակահատվածը, ձեռքբերված տեղեկությունները և այն իրավական նորմերը, որոնց պահանջները չեն պահպանվել.**

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի(այսուհետ Օրենսգիրք) 44-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջները՝ ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ստացված տեղեկությունների (այսուհետ՝ Տեղեկություններ) հետ Ձեզ ծանոթացնելու, համապատասխան բացատրություններ ներկայացնելու համար հնարավորություն ընձեռելու և ՀՀ օրենսդրությանը իրազեկելու նպատակով հայտնվում է, որ ֆիզիկական անձ Հասմիկ Ռևազյանի կողմից 03.03.2020 թվականին նվիրատվությամբ ֆիզիկական անձ Արամազդ Պարգևի Քանքանյանից ձեռք է բերվել Երևան, Կենտրոն Զորափի փողոց 70/1 շենք, 4 բնակարան հասցեում գտնվող անշարժ գույքի 1/2 բաժնեմասը:

Համաձայան 30.12.2019 թվականի թիվ 01/19-Պ-4696-490 ավարտական ակտի ֆիզիկական անձ Արամազդ Քանքանյանը հանդիսանում է Երևան, Կենտրոն Զորափի փողոց 70/1 շենք հասցեի կառուցապատող:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք)՝

- 140-րդ հոդվածին համապատասխան եկամտային հարկ վճարողներ են համարվում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք:

- 141-րդ հոդվածին համապատասխան եկամտային հարկով հարկման օբյեկտ է համարվում՝ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ) Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների:

- 143-րդ հոդվածին համապատասխան՝ եկամտային հարկով հարկման բազա է համարվում հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես համախառն եկամտի և օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերություն:

- 147-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են համախառն եկամտից նվազեցվող եկամուտները: Նույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն նվազեցվող եկամուտ է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացվող գույքը և (կամ) դրամական միջոցները: *Սույն կետի կիրառության իմաստով՝ նվազեցվող եկամուտ չի համարվում Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ կառուցապատող համարվող ֆիզիկական անձից նվիրատվության կարգով ստացվող գույքը:*

- 150-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 2-15-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է սյուն մասով սահմանված դրույքաչափերի սանդղակով:

- Օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ բնամթերային (ոչ դրամական) ձևով արտահայտված գործարքների ու գործառնությունների շրջանակներում ձևավորվող հարկման բազաներն ու ակտիվների սկզբնական արժեքները որոշվում են ազատ (շուկայական) գների հիման վրա՝ ՀՀ կառավարության 09.03.2017թ. N241-Ն որոշման N1 հավելվածով:

Հաշվի առնելով վերոնշյալը ֆիզիկական անձի կողմից կառուցապատող համարվող ֆիզիկական անձից նվիրատվությամբ գույքի ձեռքբերման մասով առաջանում է եկամտային հարկի պարտավորություն՝ Օրենսգրքի 150-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերի սանդղակով:

Ֆիզիկական անձը մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող հարկային տարվա ապրիլի 20-ը ներառյալ՝ հարկային մարմին պետք է ներկայացնի եկամտային հարկի տարեկան հաշվարկ (ձևը հաստատված է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 30.12.2016թ. N300-Ն հրամանի 3-րդ հավելվածով) և վճարի դրա արդյունքում առաջացող եկամտային հարկի գումարը:

4. Ձեռքբերված տեղեկությունների սահմաններում պարտավորության նախնական հաշվարկը և պատասխանատվության կիրառման իրավական հիմքերը.

Ֆիզիկական անձ Հասմիկ Ռևազյանի կողմից 2020 թվականների եկամտային հարկի տարեկան հաշվարկը չներկայացնելու և վճարումները չկատարելու պայմաններում հարկային պարտավորությունների հաշվարկը կատարվում է հետևյալ ձևով.

ՀՀ կառավարության 09.03.2017թ. N241-Ն որոշման N1 հավելվածի համաձայն Երևան, Կենտրոն Զորափի փողոց 70/1 շենք, 4 բնակարան հասցեի անշարժ գույքի 1/2 բաժնեմասի շուկայական արժեքը կազմում է 54,782,412 ՀՀ դրամ:

Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն վերոգրյալ գործարքից հաշվարկվում է եկամտային հարկ **12,599,955** ՀՀ դրամի չափով (54,782,412*23%):

Օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն՝ հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ **1,229,756** ՀՀ դրամ գումարի չափով (12,599,955x244x0.04%):

Հարկման բազա	Եկամտային հարկ	Հարկային օրենսգրքի 401 հոդվածով հաշվարկված տույժ	Ընդամենը
54,782,412	12,599,955	1,229,756	13,829,711

Տեղեկացվում է, որ հարկային պարտավորությունները հաշվարկվել են 20.12.2021թ. դրությամբ և ենթակա է վերահաշվարկման լրացուցիչ նյութերի ու փաստարկների առկայության և ներկայացման դեպքում:

5. Սույն արձանագրությանը կցվում են անբաժանելի մասը հանդիսացող

-

6. Արձանագրությունը կազմած հարկային մարմնի պաշտոնատար անձի անունը, ազգանունը, ստորագրությունը.

ՀՀ ՊԵԿ ՀՏ և ՌՎ վարչության կամերալ ուսումնասիրությունների և վերլուծության թիվ 4 բաժնի գլխավոր հ/տ **Հ. Ավետիսյան**